Լևոն Խեչոյան

Կարմիր գետի ափին աղոթելիս

Կատավորի մեռնելու երրորդ օրվա լիալուսին գիշերը թաղի թափառական ամենախոշոր Ստեփան անունով կատուն պատու հանից ներս մտավ ու բոլորի աչքի առաջ խփեց մեռելին:

Երկու ամսվա ընթացքում դա արդեն երրորդ հանգուցյալն էր, որոնց դագաղի վրա լիալուսին գիշերներին հարձակվել էր:

Գիշերվա կեսին հրավիրված պաթոլոգոանատոմը գունավոր փոշի ներով, օխրայով ու կապույտ մածուկներով սարքեց դատավորի դեմքը:

Տոթից շնչահեղձվում էինք, վիճում էինք: Տարբեր առաջարկություններ կային: Ասում են . «Դատավորը…»: Կարեւոր խոր հուրդներով են գնում-գալիս: Լապտերները վառած՝ շտապ օգնությունն էլ եկավ, ներսից «վալիդոլ» է բուրում: Բժշկուհու կոնքերին եմ նայում: Ուշ ժամ է, գնում են տները: Հետո լռություն է:

Վաչիկը կատվի տեղը գիտեր, տրամվայի շրջադարձից այն կողմ՝ փողոցի ծայրամասում, սեւ տուֆե տների բակում, աղբյուրի մոտ է տեսել:

Ֆորմալինի հոտ է կանգնել տաք օդի մեջ: Մեկ-երկու հրացան են վերցնում, մի քանի հոգով դուրս են գալիս, դատարանի աշխա տա կիցներից մեկն էլ է նրանց հետ գնում:

Չորս-հինգ ժամ առաջ, այդպիսի ահարկու հարձակումից սարսա փած՝ դատավորի ութ տարեկան տղան ուշագնաց եղավ, լե զուն կուլ գնաց, հիմա էլ

լեզուն է բռնվել, տարել են հիվանդանոց, կինը՝ Սուսանն էլ է այնտեղ:

Դատավորը մեր բարեկամն է, մեզ հորեղբոր տղա է գալիս, մի քանի հոգով մնացինք՝ վերջին գիշերն էինք նրա հետ անցկացնելու, եթե աղջիկն ու փեսան հասցնեին, հեռագրի համաձայն, Մոսկվայից գային:

Սուրենը՝ մեր հորեղբոր տղաներից ամենաավագը, մեզանից ոչ մե կի հետ ընդհանրապես համաձայն չէ: Ուզում է հուղարկավորու թյունը անպայման «պետական գործչին» վայել, փողայիներաժշտու թյունով լինի:

Ասում է. «Տերտեր-մերտեր հրավիրեցինք՝ ես հաստատ գիտեմ՝ մարզպետը չի գա»: Ինձ ասում է. «Խոսիր, ի՞նչ ես սուսուփուս նստել, երբ որ խոսել է պետք, միշտ կողք ես կանգնում, մի բան ասա, գոնե ձայնդ լսենք, ասում է, իսկ եթե տերտեր չհրավիրենք, կարող է մարզպետը գա: Կգա, բոլորիս պատիվն է, միայն ինձ համար չէ: Մի երկու երեխի էլ մի քանի բարձ-մարձ կտանք ձեռները, թող ետեւից մեդալները բերեն: Ինձ որ լսեք, մինչեւ անգամ մարտական զենքը կարելի է բարձի վրա տանել»: Գալիս, կանգնում է իմ դիմաց, ասում է. «Հիմա էլ պրծում չկա, սկսիր խոսել, ասում է, ես դիպլոմ չունեմ, դիպլոմավորները դուք եք, մեր հավատարմությունը տեսնելով՝ ձեզ աշխատանք կտան, ինձ՝ չէ»: Ասում է. «Ի՞նչ վերին գոյություն, չկա բնությունը հավասարակշռող այդպիսի ուժ. չնայած բարձրագույն կրթություն չունեմ, բայց այս հարցի շուրջ դատավորի հետ էլ շատ եմ խոսել, ձեզ էլ ասեմ»: Առարկություն չի ընդունում, մանավանդ իմը, մի բառ անգամ չի թողնում խոսեմ, լռեցնում է: Ոչ մեկիս հետ համաձայն չէ, վիճում է: Ասում է. «Մեր աշխարհը, որտեղ ապրում ենք, խուփով ծածկված է, բնակվում ենք փակ համակարգի մեջ, ինչքան ուզում ես աղաղակիր, օգնություն կանչիր, ոչ ոք չի լսի: Զրհորի միջից որ կանչես, քեզ դրսից կլսե՞ն»:

Պաթոլոգանատոմն ընդհատում է աշխատանքը, ասում է. «Սուրճ կա՞, թե՝ չե՞ք կարող մի հատ սուրճ տալ, Սուրենին թե, այդպես չեն ասի, այդպիսի բան կասե՞ն»: Քանի որ հացը նման աշխատանքով էր վաստակում, մեր վերաբերմունքը արհամարհական էր, չարձագան քեցինք:

Սուրենը՝ մեր հորեղբոր տղաներից ամենաավագը, ծխախոտը վառել է, դրսում ցանկապատի երկաթե դուռն է բացվում-փակվում, ասում է. «Չնայած

բարձրագույն կրթություն չունեմ, բայց այս հարցի շուրջ դատավորի հետ շատ եմ խոսել, հիմա էլ ասեմ: Նավը ձեզ օրինակ՝ մեր երկրագունդը օվկիանոսում կորած նավի նման է, միայն թե առանց ղեկի ու շարժիչի պլանում է, ոչ մեկն էլ չգիտի, թե՝ ուր: Հրեշտակ-մրեշտակ էլ չկա: Մոմ վառել, ծունկ ծալելն էլ իզուր է, երբ պիտի խելքի գանք ունայնության առաջ, դատարկություն, դատար կություն է: Նորիկիս ժամանակ ետ-առաջ եմ վազվզում գետի երկայնքով, օգնություն եմ կանչում, ձեռք եմ պարզում երկինք, աղա չում եմ, աղոթում եմ, ոչ մի բան… տասը տարեկան էր»: Նորիկին անցյալ տարի Կարմիր գետը տարավ: Երկու անգամ էլ կինը հոիու թյունը չպահեց, վիժեց, հետո հայտնի մի մարդու սիրուհին դարձավ:

Պաթոլոգանատոմը օխրայով ու կապտագույն մածուկով դատավորի դեմքն է սարքում, ասում է . «Կռացած էնքան շնչեցի էս ֆորմալինի հոտը, ոնց որ արբած լինեմ, սուրճ չունե՞ք, մի հատ սուրճ տայիք, կամ եթե չկա՝ թունդ թեյ, Սուրենին ասում է, այդպես մի խոսիր, այդպես չեն արտահայտվի»: Սուրենն ասում է . «Քեզ ինչ կա, եղածը իմ հետ է եղել»: Նրա մասնագիտության վերաբերյալ շատ վատ բան է ասում: Ահագին ժամանակ վիճում են իրար հետ:

Ուշացած փողկապավոր տղամարդիկ, ծաղկեփնջերով կանայք են գալիս, մթից լույսի մեջ են հայտնվել, խոնավ պեծկլտացող աչքեր ունեն: Կանգնել են, նորից են գնում մութի մեջ, ասում են . «Դատա վո՛րը»: Հենց հեռանում են, Սուրենը շարունակում է իր խոսքը, ասում է . «Չնայած բարձրագույն կրթություն չունեմ, բայց այս հարցի շուրջ դատավորի հետ էլ շատ եմ խոսել»: Կրթության մասին նրա քա մահրանքով արտահայտվելը իմ համալսարանական լինելուն էր վերաբերվում: Տանել չի կարողանում խոսելս, առավել եւս՝ ցանկա ցած հարցի մասին կարծիք հայտնելս:

Ձեւացնում է, թե իրենց վեճին միջամտեցի, դրանից է նյարդայնացել, իրականում կնոջ՝ հայտնի մարդու սիրուհին լինելուց է անհաշտ վողականությունն իմ հետ: Անընդհատ լռում եմ, որ հունից դուրս չգա, խուսափում եմ ուղիղ ինձ վերաբերվող խոսքին պատասխանել:

Հետո նորից է բոլորի հետ վիճում, կրկին անցնում է տիեզերական թեմային: Կնոջ անունն է տալիս, թե նրա միամսյա անհայտ բացակա յության ժամանակ, թեկուզ

լիներ որեւէ առող՝ ջարանում բուժման նպատակով, ինքը գիշերուզօր երեսը բարձի մեջ խրած՝ խոսել է: Ասում է. «Անդունդի պես դատարկ է մեր շուրջ բոլորը, եւ թող մարդը հույս չունենա որեւէ տեղից, ասում է, ես այս մասին շատ եմ խոսել դատավորի հետ»:

Առարկութիւններ չի ընդունում, այդ թեմայով արդեն հայտնի, ձեւակերպված օրենքներն ու հասկացությունները նույնպես մերժում է: Վեճը կիսատ է թողնում, ասում է. «Ախպեր, այո, եթե այդպես է, դե թող արձագանքի»: Աջ ձեռքի մատները ծալում է, ոսկրոտ մասով երեք անգամ հաստ պատն է ծեծում, ասում է. «Ահա, դե թող պատաս խանի ձեր ասածը…»: Քննախույզ՝ մեր աչքերը դիտում, սպաս ում է, քմծիծաղ կա ներքեւի շրթունքին:

Երեք անգամ, հատ առ հատ ընդմիջվելով, պատասխան թակվում է տան՝ դրսի, փողոցին զուգահեռ անցնող պատը:

Գիշերվա ժամը հինգին հայտնի լռությունն է, երբ քնում են անգամ ամենազգոն շները, տոթը պաղում է, մոմերի բոցի վրա դեռ գիշե ռային թիթեռներ են ճտտոցով պայթում:

Աթոռին քնած Հովանը զարթնում է քնից, հարցնում է. «Ի՞նչ»: Սու ռե նը՝ մեր ամենաավագ հորեղբոր տղան, ասում է. «Այդքանով պրծավ ու գնա՞ց, մենք էլ հավատացինք»: Հանկարծ ցատկում է տեղից, չորս անգամ դրսի պատն է ծեծում, ասում է. «Եթե կա, դե թող հիմա էլ չորս անգամ պատասխան խփի»:

Այդ պահին Վաչիկն ու նրա հետ գնացածներն են վերադառնում: Ասում է. «Մեծը կուրացած էր, չտեսավ էլ՝ ինչպես մոտեցանք, երեւի դրանց սեւ կարիճն էր կծել, աղբյուրից չէին հեռանում, անընդհատ խմում էին, չորսին էլ տեղնուտեղը մեխեցինք պատին: Ձագերը շատ սիրուն էին՝ մեկը կարմիր էր, մյուսը՝ դեղին, էն մեկը՝ կապույտ»: